



ԱՄԵՆԵՆ ԼԱՒ ՆՈՒԷՐԸ

Վերջապես Նոր Տարուան պատրաստութիւնները սկսան:

Մայրիկը ուշի-ուշով խոհագիր մը կը կարդար եւ զգուշութեամբ կը չափեր կարագը, շաքարն ու ալիւրը եւ կը համրեր հաւկիթները, որպէսզի պատրաստէր Աննային սիրած կարկանդակը: Աննան ալ տօնածառը կը զարդարէր: Այս տարի Կաղանդ Պապան ի՞նչ պիտի բերէ Աննային, - հարցուց հայրիկը հիւրասէնեակէն, ուր թերթ մը կը կարդար:

- Ի՞նչ գիտնամ: Առաջ պուպրիկ մը կամ ուրիշ խաղալիք մը կը բերէր, բայց հիմա մեծցած է արդէն, - անդիէն ձայնեց մայրը, - երրորդ դասարանի աղջիկ է, գործը դժուարացաւ:

- Աւելի լաւ: Ի՞նչ թող գրէ Կաղանդ Պապային եւ յայտնէ իր ուզածը:

Աննա, որ կը հետեւէր այս խօսակցութեան ըսաւ.

- Ես շատոնց կ'ուզէի գրել, - բայց ինչպէ՞ս դրկեմ, քանի որ Կաղանդ Պապային հասցէն չեմ գիտեր:

- Կաղանդ Պապային հասցէն ոչ ոք գիտէ, - խօսեցաւ մայրը: Դուն գրէ՛ ու բարձիդ տակ դի՛ր նամակը: Ան կու գայ ու կ'աննէ գայն:

Աննա շփոթահար մտաւ իր սենեակը, նստաւ գրասեղանին առջեւ, թերթ մը թուղթ փրցուց սեւագրութեան տետրակէն ու սկսաւ գրել.



*«Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես շատոնց կ'ուզէի նամակ
գրել ու դրկել քեզի, բայց չէի
վարժուած գրելու եւ հասցէդ
ալ չունէի: Ամէն տարի, երբ
դուն նուէր կը բերես ինձի,
թէ՛ կ'ուրախանամ, թէ՛
կը տխրիմ: Ինչո՞ւ միայն
ինձի նուէր կը բերես, իսկ
մայրիկիս ու հայրիկիս չես
բերեր: Կաղա՛նդ Պապա,
կը խնդրեմ, որ այս տարի
անպայման զիրենք եւս յիշես:
Գոնէ անգամ մը անոնք ալ թող
ուրախանան այնպէս, ինչպէս ես միշտ
կ'ուրախանամ:*

*Ճնորհակալ եմ՝
Աննա»*

Կաղանդ Պապային պատասխանը չուշացաւ: Յաջորդ օրն իսկ Աննա անկողինին բարձին ծալքերուն մէջ գտաւ նամակը եւ բարձրաձայն սկսաւ կարդալ գայն առանց զգալու, որ յուզուած էր ու ձայնը կը դողդողար.

*«Անուշի՛կ Աննա,
Ես գիտէի, որ դուն սքանչելի աղջիկ մըն ես: Ամէն փոքրիկ պէտք է
սիրէ ծնողքը, որովհետեւ անոնք աշխարհի ամենալաւ արարածներն են:
Միայն թէ շատ մի՛ մտահոգուիր: Տարիներ առաջ ես քու
ծնողներուդ բերի լաւագոյն նուէրը՝ սիրուն պուպրիկ մը, որ կամաց-
կամաց մեծցաւ եւ իսկական աղջիկ մը դարձաւ:*

*Անոնք այդ աղջկան անունը Աննա դրին եւ շատ սիրեցին զինք:
Հարցո՛ւր անոնց, եւ պիտի ըսեն քեզի, թէ որքա՛ն գոհ են իմ նուէրէս:
Ես վստահ եմ, որ միշտ ալ գոհ պիտի մնան:*

*Տարուկ պաշիկներ
Կաղանդ Պապա»*

Աննա արագօրէն ծալեց նամակը եւ գրպանը դրաւ գայն: Պահ մը ետք դարձեալ սկսաւ կարդալ: Ան երբեք չնկատեց, թէ Կաղանդ Պապային ձեռագիրը որքա՛ն կը նմանէր մայրիկին ձեռագիրին:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑՈՒՄ ԳՐԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՑՈՒՄԸ
ՆԿԱՐԱԶՍՈՐԵՑՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՄԸ

ՓԱԹԻԼՆԵՐ

Փաթիլները շատ ուզեցին
Ծաղիկներուն նմանիլ
Ու երկինքէն վար թափեցան
Ինչպէս ճերմակ ծաղիկներ:
Մէկը միւսին ըսաւ այսպէս.
- Ես վարդի շատ կը նմանիմ


- Ես մէխակ եմ: - Լողուս եմ ես:
- Իսկ ես՝ ճերմակ շուշան մը:
Կը վիճէին օդին մէջ այսպէս
Փաթիլները երկնային
Բայց երբ գետին հասան, արդէն
Ծաղիկները չկային ...




Կրնա՞ս պատկերներուն միջեւ ութ տարբերութիւններ գտնել:



Կրնա՞ս լուծել:



Թիւերուն յաջորդականութեամբ, ամբողջացուր պատկերը:



ՓՈՔՐԻԿ ՅՈՒՐԻ-ԲԵՐԻՆ

Ժամանակին փոքրիկ հուրի-բերի մը կար, որ տարօրինակ սովորութիւններ ուներ: Ան մետաքսէ հագուստ մը կը հագուէր, գլխուն կը դներ բամպակէ երկար գլխարկ մը, ծայրը՝ պոչով, որ կ'երկարէր ամէն անգամ երբ ան գլուխը շարժէր:

Փոքրիկ հուրի-բերին կը սիրէր փոքրիկ տղաքը: Երբ անոնք քնանալու երթային, կը նստէր անոնց անկողինին վրայ, բարձին մօտ եւ անոնց գլխուն վրայ կը բանար գեղեցիկ, գունաւոր հովանոց մը: Այն ատեն տղաքը աղուոր, հաճելի երազներ կը տեսնէին:

Տղաքը չէին գիտեր ուրկէ՞ կու գային կամ ո՞վ կը բերէր իրենց այդ երազները. հուրի-բերին կը սպասէր, որ տղաքը իրենց աչքերը գոցէին եւ քնանային, ապա հովանոցով կու գար անոնց մօտ, եւ երազներով լեցուն պայուսակը կը բանար: Այս պատճառաւ ալ ան կոչուած էր երազներ ծախող հուրի-բերի:

Գիշեր մը երազներ ծախող այս փոքրիկ հուրի-բերին գնաց Վաչիկ անունով տղու մը քով, շատ սիրեց գայն ու որոշեց ամբողջ շաբաթ մը անոր գեղեցիկ երազներ բերել:

Երկուշաբթի օր, Վաչիկ հագիւ աչքերը գոցած էր քնանալու համար, երազ ծախող փոքրիկ հուրի-բերին անոր անկողինին մօտեցաւ եւ ականջին փսփսաց.

- Այս գիշեր միասին շատ հաճելի ժամանակ պիտի անցընենք, որովհետեւ, սենեակը գեղեցիկ պարտեզի մը պիտի վերածեմ:

Այս խօսքին վրայ, տան մէջ անմիջապէս երեւցան տարօրինակ տեսքով ծառեր, ոմանց վրայ՝ անուշահոտ ծաղիկներ, իսկ ոմանց՝ ախորժելի պտուղներ: Լամբերու պէս, կանաչ խոտերուն վրայ երեւցան տեսակ-տեսակ անուշեղեններով լեցուն պնակներ: Ինչ գեղեցիկ էր այս տեսարանը:

Վաչէ պարտեզին մէջ բնութիւնը կը վայելէր, երբ յանկարծ ձայներ լսեց իր գրադարանէն: Գրադարանին մէջ գտնուող դարակէ մը երեւցաւ իր դպրոցական տետրակներէն մէկը, որուն վրայ Վաչիկ ծուռ ու մուռ գիրեր գրած էր:

Փոքրիկ հուրի-բերին այդ ծուռ ու մուռ գիրերուն բարկութեամբ նայեցաւ: Եւ ո՞վ հրաշք, գիրերը գեղեցկացան, կանոնաւորուեցան ու շիտակ կեցան՝ ուղիղ շարուած գիւղերու նման:

Բայց երբ հուրի-բերին անհետացաւ ու Վաչիկ առաւօտեան աչքերը բացաւ՝ իր գրածները նախկին ձեւով գտաւ՝ ծուռ ու մուռ: Ո՞չ գեղեցիկ պարտեզը կար, ո՞չ ալ համեղ պտուղները կը ճօճէին ծառերուն վրայէն:

Երեքշաբթի իրիկուն Վաչիկ նոր քնացած էր, երբ իր սենեակէն ներս մտաւ փոքրիկ հուրի-բերին: Պատին վրայ տեսաւ գեղեցիկ նկար մը կայ: Նկարը կը ներկայացներ բնական տեսարան մը՝ բարձր ծառեր, ծաղկաւետ մարգագետիններ եւ լայն գետ մը: Գետին մօտ բարձր աշտարակներով դղեակ մը կար:

Յուրի-բերին իր կախարդական գաւազանը երկարեց դէպի նկարը եւ ըսաւ.

- Այս նկարը իրական թող ըլլայ: Անմիջապէս ծառերը սկսան շարժել իրենց ճիւղերը օդին մէջ եւ թռչունները սկսան երգել ճիւղերուն վրայ անուշ եղանակներով:

Յուրի-բերին բռնեց Վաչիկին թելէն եւ բերաւ դաշտ, ծաղիկներուն մէջտեղ: Բայց Վաչիկ վազեց դէպի գետ եւ պզտիկ նաւակ մը նստեցաւ: Ձուկերը ամէն կողմէ իր մօտ եկան՝ իրեն բարեւ տալու: Գունաւոր թիթեռնիկները կը թռչէին իր շուրջ, ի պատիւ իրեն: Վաչիկ ուրախութենէն պիտի թռչէր:

Այդ միջոցին դղեակին նայեցաւ եւ պատշգամներուն վրայ տեսաւ պզտիկ, գեղեցիկ աղջիկներ, որոնք զինք կը ճանչնային: Այդ աղջիկներէն մէկը սրտածէւ շաքար մը տուաւ իրեն:

Յետոյ ան դաշտ վերադարձաւ եւ նստեցաւ մինչեւ առաւօտ ծաղիկներուն պատմութիւնները լսելու:

Չորեքշաբթի գիշեր հուրի-բերին Վաչիկը տարաւ մեծ նաւակի մը մօտ եւ միասին երկար պտոյտ մը կատարեցին:

Մինչ նաւակը կը սուրար, յանկարծ յոգնած արագիլ մը ինկաւ իրենց ոտքերուն առջեւ:

Նաւավարը արագիլը դրաւ վանդակի մը մէջ: Սակայն Վաչիկ, որ բարի սիրտ մը ուներ, երբ զգաց որ արագիլը այլեւս հանգստացած է, վանդակին դուռը բացաւ, որ թռչի:

Բաղը, սազը եւ հնդկահաւը զուր նախանձեցան անոր:

(Շարունակելի)



ԳԻՏԵԻՐ, ԹԵ...

* Այժմ անհետացած փիղ-թռչունը, որ մինչև 17-րդ դար Մատակասքարի մեջ կ'ապրեր, 30,5 սմ. մեծությամբ հակիթներ կ'ածեր:

* Աշխարհի ամենէն մեծ հռոմեական տաճարին ակերակները Լիբանանի մեջ կը գտնուին: Պաալպարի մեջ Ժիւփիթերի տաճարին սիւները 20 մէթր բարձրութիւն ունին:

* Դանիոյ Սամսօ կղզիին վրայ գործածուած ամբողջ ուժանիւթը կ'արտադրուի քամիներու ուժի օգտագործութեամբ:

* 1908-ին թէյի վաճառական մը թէյի նմուշներ բաժնած է՝ անոր չորցած տերեւները դնելով մետաքսեայ փոքրիկ տոպրակներու մէջ: Յաճախորդները շուարած, չգիտնալով ի՛նչ ընել, զանոնք ուղղակիօրէն թաթխած են տաք ջուրին մէջ՝ թէյ պատրաստելու համար: Այդ ձեւով, թէյի փոքրիկ տոպրակները պատահականօրէն ծնած են:

